Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 64-Ն, 65-Ա, 68-Ա, 70-Ա ԵՎ 71-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 64-Ն որոշման թիվ 2 հավելվածի 7-րդ կետի դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 2.1 հավելվածը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասին:

Թիվ 65-Ա որոշման մեջ չի գրառվել իրականացված գույքագրման տարեթիվը, օրն ու ամիսը:

Թիվ 68-Ա որոշման 3-րդ հավելվածի 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերը պետք է համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29-Ն հրամանի 1-ին հավելվածով սահմանված պահանջներին:

Թիվ 70-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ «հաստատել» բառի փոխարեն պետք է գրառել «սահմանել» բառը:

Թիվ 71-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության 0.67631 հեկտար մակերեսով հողամասը, առանց հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու: Որոշումը չի համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) ենթակետի պահանջներին:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
07.02.2020թ.